ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 դեկտեմբերի 2025 թվականի N 1910-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Համաձայն «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածի 4.1-ին մասի պահանջների, ինչպես նաև 23-րդ հոդվածի 3-րդ մասին, «Հայաստանի Հանրապետության 2026 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ օրենք) 2-րդ, 3-րդ, 6-9-րդ հոդվածներին համապատասխան Հայաստանի Հանրապետության 2026 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովելու նպատակով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Սահմանել՝

1) որ սուբսիդիան պետության հանձնարարությամբ և որոշած գնով կազմակերպության կողմից որպես նվազագույն շահավետ գնից ցածր գնով ապրանքների արտադրության, արտահանման, ներմուծման, աշխատանքների կատարման և ծառայությունների մատուցման արդյունքում այդ կազմակերպության կրած վնասի

կամ դրա մի մասի, աջակցության ծրագրերի շրջանակում վարկի կամ լիզինգի տոկոսադրույքի, վարկի կամ լիզինգի կանխավճարի մասնակի կամ ամբողջական, ինչպես նաև ներդրումային ծրագրերի շրջանակներում արտադրության մակարդակի վրա ազդելու կամ իրականացված աշխատանքների դիմաց կազմակերպության կատարած ծախսերի կամ դրանց մի մասի փոխհատուցումն է: Նվազագույն շահավետ գինը տնտեսապես հիմնավորված այն նվազագույն գինն է, որով պետության գնային կարգավորման բացակայության դեպքում կազմակերպության կողմից կարտադրվեր, կարտահանվեր կամ կներմուծվեր տվյալ ապրանքը, կկատարվեր տվյալ աշխատանքը կամ կմատուցվեր տվյալ ծառայությունը.

2) որ դրամաշնորհը տնտեսության որևէ ճյուղի (ոլորտի) կամ գործունեության որևէ տեսակի խթանման (խրախուսման) նպատակով Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից կազմակերպությանն իր կանոնադրական խնդիրների կամ դրանց մի մասի իրականացման նպատակով անհատույց և անվերադարձ տրամադրվող դրամական հատկացումն է: Ընդ որում, 2026 թվականի ընթացքում իրավաբանական անձանց դրամաշնորհների տրամադրումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կազմակերպված մրցույթի արդյունքում՝ բացառությամբ սույն որոշման N 5 հավելվածի NN 7 և 7.1 աղյուսակներում նշված իրավաբանական անձանց հատկացվող դրամաշնորհների.

3) որ տվյալ տարվա պետական բյուջեով նախատեսված հատկացումների հաշվին պետության կարիքների համար իրականացվող գնումների պլանում փոփոխությունները և լրացումները գլխավոր կարգադրիչներն իրականացնում են ինքնուրույն, եթե այդ փոփոխությունները և լրացումները չեն առաջացնում՝

ա. «Հայաստանի Հանրապետության կառավարության պահուստային ֆոնդ» ծախսային ծրագրի ներգրավվածությամբ բյուջետային հատկացումների անհրաժեշտություն,

բ. Հայաստանի Հանրապետության կառավարության 2025 թվականի դեկտեմբերի 4-ի N 1761-Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդ կետով սահմանված վերաբաշխումների անհրաժեշտություն.

4) որ գլխավոր կարգադրիչները պետական բյուջեի կատարման ընթացքում կարող են Հայաստանի Հանրապետության 2026 թվականի պետական բյուջեով

իրենց կողմից իրականացվող ծրագրերի մասով հաստատված հատկացումների ընդհանուր գումարի շրջանակներում իրականացնել վերաբաշխումներ՝ չգերազանցելով իրենց կողմից իրականացվող հատկացումների ընդհանուր գումարի 2.0 տոկոսը.

5) որ գլխավոր կարգադրիչները 2026 թվականի ընթացքում ֆինանսական միջոցների հատկացման առաջարկությունները քննարկելիս, կառավարության համապատասխան որոշման նախագծի ընդունումը հիմնավորող փաստաթղթով, որպես պարտադիր պայման, ներկայացնեն համապատասխան հավաստում՝ պահանջվող ֆինանսական միջոցների հաշվին կնքվելիք պայմանագրով (համաձայնագրով) սահմանվող ծավալներով և ժամկետներում կապալառուի կողմից շինարարական աշխատանքները նախատեսված նորմերին համապատասխան բովանդակային առումով կատարելու հնարավորության վերաբերյալ.

6) որ «Հայաստանի Հանրապետության 2026 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 17-րդ մասով նախատեսված՝ յուրաքանչյուր պետական մարմնի կողմից իրականացվող ծրագրերի համար նախատեսված բյուջետային միջոցներն արդյունավետ, օգտավետ և (կամ) խնայողաբար/տնտեսող կառավարելու արդյունքում առաջացող տնտեսումն (բացառությամբ որոշման N 5 հավելվածի NN 3 և 4 աղյուսակներում նշված ծրագրերի, միջոցառումների գծով նախատեսված համաֆինանսավորման միջոցների և գնումների ընթացակարգերի արդյունքում ձևավորված տնտեսումների) ուղղել այդ պետական մարմնի աշխատակիցների պարգևատրմանը, որը չի կարող գերազանցել ընթացիկ տարվա ընթացքում փաստացի վճարված հիմնական աշխատավարձի ֆոնդի տարեկան հանրագումարը.

7) որ եթե Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումներով կատարվող վերաբաշխումները ներառում են նաև Հայաստանի Հանրապետության կառավարության պահուստային ֆոնդից հատկացումներ, ապա այդ հատկացումներն արտացոլվում են առանձին հավելվածով.

8) որ 2026 թվականի ընթացքում պետության կարիքների համար իրականացվող գնումների պլանում փոփոխություններ և լրացումներ կատարելիս գնման

ձևերը նախապես չեն համաձայնեցվում Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության հետ.

9) օրենքի՝

ա. N 3 հավելվածով նախատեսված դեֆիցիտի (պակասուրդի) ֆինանսավորման եռամյակային (աճողական) համամասնությունները՝ ըստ ֆինանսավորման աղբյուր-ների և դրանց առանձին տարրերի և ֆինանսական ակտիվների ձեռքբերումների ու ներգրավված փոխառու միջոցների մարումների գծով ծրագրերն ու միջոցառումները՝ համաձայն N 1 հավելվածի,

բ. 6-րդ հոդվածով հաստատված եկամուտների հավաքագրման եռամյակային (աճողական) համամասնությունները՝ ըստ եկամուտների ձևավորման աղբյուրների դասակարգման առանձին խմբերի՝ համաձայն N 2 հավելվածի,

գ. օրենքով նախատեսված բյուջետային ելքային ծրագրերի և միջոցառումների գծով արդյունքային (կատարողական) ցուցանիշներն ըստ բյուջետային հատկացումների գլխավոր կարգադրիչների՝ համաձայն N 1 հավելվածի N 5 աղյուսակի, N 9 հավելվածի և ըստ ծրագրերի միջոցառումները կատարող հանրային իշխանության մարմինների՝ համաձայն N 9.1 հավելվածի,

դ. 6-րդ հոդվածով հաստատված առանձին եկամտատեսակների գծով տարեկան մուտքերի հավաքագրման եռամյակային (աճողական) համամասնությունները՝ ըստ դրանց գանձման համար պատասխանատու պետական կառավարման մարմինների՝ համաձայն N 6 հավելվածի,

ե. N 2 հավելվածով ըստ առանձին համայնքների բաշխված 2026 թվականի ֆինանսական համահարթեցման դոտացիաների տարեկան գումարների հատկացման եռամյակային (աճողական) համամասնությունները՝ համաձայն N 7 հավելվածի.

10) որ 2026 թվականի ընթացքում Հայաստանի Հանրապետության պետական կառավարման համակարգի մարմիններին ենթակա մարմինների, ինչպես նաև պետական ոչ առևտրային կազմակերպությունների վերակազմակերպված պետական հիմնարկներին վերապահված օրենքի N 1 հավելվածով սահմանված ծախսային ծրագրերն ու միջոցառումները կատարող պետական մարմնի լիազորությունները

վերապահվում են Հայաստանի Հանրապետության պետական կառավարման համակարգի համապատասխան մարմիններին.

11) որ 2026 թվականի ընթացքում պետական ոչ առևտրային կազմակերպությունների վերակազմակերպված պետական հիմնարկների (բացառությամբ այն հիմնարկների, որոնց ֆինանսավորումը Հայաստանի Հանրապետության 2026 թվականի պետական բյուջեով նախատեսվում է իրականացնել պետական գնումների ձևով) գրանցման պահից այդ հիմնարկների համար օրենքով նախատեսված միջոցները տրամադրվում են բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպություններին» հոդվածով՝ տվյալ պետական ոչ առևտրային կազմակերպությունների հետ կնքված համապատասխան պայմանագրերի հիման վրա: Սույն ենթակետում նշված դեպքերի վրա չի տարածվում Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի դեկտեմբերի 24-ի N 1937-Ն որոշման գործողությունը: Ընդ որում, մինչև պետական ոչ առևտրային կազմակերպությունների վերակազմակերպումը, օրենքով նախատեսված միջոցների սահմաններում վերակազմակերպվող պետական հիմնարկներին տրամադրված հատկացումները ներառվում են սույն ենթակետում նշված պետական ոչ առևտրային կազմակերպությունների հետ կնքված պայմանագրերում.

12) որ 2026 թվականի ընթացքում Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից դրամաշնորհ ստացող պետական ոչ առևտրային կազմակերպության ծախսերի նախահաշիվը հաստատվում է տվյալ կազմակերպության լիազորված մարմնի կողմից՝ ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների.

13) որ պետական իշխանության մարմինների կողմից Հայաստանի Հանրապետության 2026 թվականի պետական բյուջեի միջոցների հաշվին ավտոմեքենաների ձեռքբերումը պետք է իրականացվի Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի սեպտեմբերի 28-ի N 1666-Ն որոշման պահանջներին համապատասխան.

14) որ սույն որոշման N 3 հավելվածով «1110 Այլընտրանքային աշխատանքային ծառայություն» ծրագրի «12001 Այլընտրանքային աշխատանքային ծառայողներին դրամական բավարարման և դրամական փոխհատուցման տրամադրում» միջոցառման

կատարման համար պատասխանատու պետական մարմիններին այլընտրանքային աշխատանքային ծառայողների դրամական բավարարման գումարները պետք է վճարվեն այլընտրանքային աշխատանքային ծառայության վայրի կազմակերպություն-ների միջոցով.

15) որ «Եվրասիական տնտեսական միության մասին» պայմանագրի N 5 հավելվածի արձանագրության 6-րդ կետի պահանջն ապահովելու նպատակով 2025 թվականի վերջին աշխատանքային օրվա ընթացքում ներկրման մաքսատուրքերի, ինչպես նաև հատուկ, հակադեմփինգային, փոխհատուցման տուրքերի գումարների բաշխումից 2026 թվականին Հայաստանի Հանրապետության պետական բյուջե փոխանցված գումարներն արտացոլվում են Հայաստանի Հանրապետության 2025 թվականի պետական բյուջեի կատարման հաշվետվության մեջ.

16) որ «Կուսակցությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան նյութական աջակցության համար օրենքի N 1 հավելվածի N 2 աղյուսակի «1024 ՀՀ Ազգային ժողովի լիազորությունների իրականացման ապահովում» ծրագրի «12002 Աջակցություն կուսակցություններին և կուսակցությունների դաշինքներին» միջոցառմամբ նախատեսված հատկացումների բաշխումն ըստ առանձին կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) սահմանվում է Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ (հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի 2021 թվականի արտահերթ ընտրությունների արդյունքներով կուսակցությունների և կուսակցությունների դաշինքների կողմից հավաքված ձայների թվի մասին Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի տվյալները).

17) որ օրենքի N 1 հավելվածով նախատեսված բյուջետային ծրագրերի և միջոցառումների գծով սույն որոշման N 4 հավելվածով սահմանված՝ ծրագրերի միջոցառումները կատարող, սակայն տվյալ ծրագրերի գծով բյուջետային հատկա-ցումների գլխավոր կարգադրիչ չհանդիսացող պետական մարմիններին (սույն ենթակետի իմաստով այսուհետ՝ կատարող այլ մարմիններ) վերապահվում են այդ ծրագրերի գծով բյուջետային հատկացումների գլխավոր կարգադրիչին վերապահ-ված իրավունքները (տվյալ մարմինների համար համապատասխան ծրագրի

կոնկրետ միջոցառման շրջանակներում նախատեսված հատկացումների մասով)՝ պայմանով, որ՝

ա. կատարող այլ մարմինների կողմից համապատասխան միջոցառումների կատարման հետ կապված ծախսերը պետք է իրականացվեն պետական մարմինների կողմից 2026 թվականին իրականացվող նմանատիպ ծախսերի կատարման և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և սույն որոշմամբ սահմանված ընթացակարգերին համապատասխան: Ընդ որում, այդ միջոցառումների շրջանակներում բյուջետային ծախսեր իրականացնելու նպատակով կատարող այլ մարմինների հաշիվներին բյուջետային միջոցները Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փոխանցվում են անմիջականորեն Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից՝ հիմք ընդունելով այդ մարմինների կողմից Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն սահմանված կարգով ներկայացված հայտերը և այդ միջոցառումների շրջանակներում այդ մարմինների գծով նախատեսված ծախսերի եռամսյակային համամասնությունները,

բ. համապատասխան միջոցառումների գծով նախատեսված բյուջետային միջոցների տնօրինման և դրա շրջանակներում Հայաստանի Հանրապետության 2026 թվականի պետական բյուջեի կատարման մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված հաշվետվությունները կատարող այլ մարմինների կողմից սահմանված կարգով ներկայացվում են համապատասխան ծրագրերի գծով օրենքի N 1 հավելվածի N 2 աղյուսակով նախատեսված բյուջետային հատկացումների գլխավոր կարգադրիչ հանդիսացող պետական մարմիններին, միաժամանակ, ըստ վերջիններիս պահանջի ներկայացնելով բացատրություններ այդ միջոցառումների կատարման ընթացքում առաջացած շեղումների, ռիսկերի և դրանց կարգավորման ուղղությամբ ձեռնարկվող միջոցառումների վերաբերյալ,

գ. բյուջետային հատկացումների գլխավոր կարգադրիչ հանդիսացող պետական մարմինները Հայաստանի Հանրապետության 2026 թվականի պետական բյուջեի կատարման մասին հաշվետվությունները սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն են ներկայացնում ինչպես բյուջետային հատկացումների գլխավոր կարգադրիչի մասով, այնպես էլ բացված՝

ըստ համապատասխան միջոցառումները կատարող պետական կառավարման առանձին մարմինների,

դ. բյուջետային հատկացումների գլխավոր կարգադրիչ հանդիսացող պետական մարմիններն իրականացնում են հսկողություն իրենց պատասխանատվությամբ իրականացվող ծրագրերի միջոցառումները կատարող այլ մարմինների կողմից համապատասխան միջոցառումների կատարման ընթացքի նկատմամբ: Սույն ենթակետում նշված հսկողությունն իրականացվում է համապատասխան ծրագրերի միջոցառումները կատարող այլ մարմիններից այդ միջոցառումների կատարման մասով սույն կետի «բ» պարբերությունում նշված հաշվետվությունների ստացման և դրանց մշտադիտարկման, ինչպես նաև այդ միջոցառումների գծով կատարող այլ մարմինների գանձապետական հաշիվների շարժի մշտադիտարկման միջոցով: Այն դեպքերում, երբ սույն ենթակետով սահմանված հսկողության արդյունքում ի հայտ են գալիս ռիսկեր՝ կապված համապատասխան միջոցառումների կատարման՝ ներառյալ սույն որոշման N 1 հավելվածի N 5 աղյուսակով և NN 9 և 9.1 հավելվածներով սահմանված արդյունքների ձեռքբերման մասով, բյուջետային հատկացումների գլխավոր կարգադրիչ հանդիսացող պետական մարմինները ձեռնարկում են անհրաժեշտ միջոցներ խնդրի կարգավորման ուղղությամբ, այդ թվում՝ նաև, ըստ անհրաժեշտության, դիմելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն՝ համապատասխան միջոցառման գծով կոնկրետ կատարող մարմնի ծախսերը ժամանակավորապես կասեցնելու համար.

18) որ օրենքի N 6 հավելվածում ներառված ծախսային ծրագրերը դիտարկվում են որպես առաջնահերթություն և Հայաստանի Հանրապետության 2026 թվականի պետական բյուջեում լրացուցիչ ֆինանսական միջոցների առկայության պայմաններում (Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման բարենպաստ միջավայրի և այլ գործոններով պայմանավորված), ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության 2026 թվականի պետական բյուջեի դեֆիցիտի սահմանաչափի ավելացման պարագայում վերջիններիս ֆինանսավորումը պետք է իրականացվի առաջնահերթ կարգով, ընդ որում, շինարարական, վերակառուցման և վերանորոգման աշխատանքների գծով

ծախսերի համար հիմք ընդունելով համապատասխան փորձագիտական դրական եզրակացություն ստացած նախագծանախահաշվային փաստաթղթերի հիման վրա այդ աշխատանքների արժեքների ճշգրտումները.

19) որ 2026 թվականի ընթացքում կրթական, սպորտային, մշակութային և գիտական կազմակերպությունների համար պետական մարմինների կողմից ձեռք բերված գույքն այդ կազմակերպություններին սեփականության իրավունքով տրամադրվում է տվյալ պետական մարմնի որոշմամբ.

20) որ կրթական, մշակութային և սպորտային օբյեկտների շինարարական ծրագրերի իրականացման դեպքում Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ կարող են սահմանվել Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի «Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N 168-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 526-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 19-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված դրույթներից տարբերվող կարգավորումներ.

21) որ «1015 սոցիալական փաթեթների ապահովում» ծրագրի «12001 Պետական հիմնարկների և կազմակերպությունների աշխատողների սոցիալական փաթեթով ապահովում» միջոցառմամբ Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության համար նախատեսված հատկացումների գումարը ներառում է պետության կողմից Երևանի քաղաքապետարանին ենթակա կրթական ոլորտի պետական ոչ առևտրային կազմակերպությունների և Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտենի ֆինանսավորման համար Երևանի քաղաքապետարանին հասանելիք գումարը՝ 2026 թվականի առաջին եռամսյակում՝ 115,872.0 հազ. դրամ, առաջին կիսամյակում՝ 289,680.0 հազ. դրամ (9656 շահառուի համար), ինն ամսում՝ 463,488.0 հազ. դրամ և տարեկան՝ 695,232.0 հազ. դրամ (9656 շահառուի համար).

22) որ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կողմից իրականացվող «1024. ՀՀ Ազգային ժողովի լիազորությունների իրականացման ապահովում»

ծրագրի «11003.ՀՀ Ազգային ժողովի դերի բարձրացմանն ուղղված միջոցառումների իրականացում» միջոցառման կատարման տարեկան հաշվետվությունը ներառում է համաձայնագրով սահմանված արդյունքային ցուցանիշների գծով կատարողականը.

23) որ «Հայաստանի Հանրապետության 2026 թվականի պետական բյուջեի մասին» օրենքով նախատեսված և Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությանը վերապահված՝ «1163. Մասսայական սպորտ» ծրագրի «32001. Մարզական օբյեկտների շինարարություն» միջոցառման Փարաքար համայնքի Փարաքար բնակավայրի մարզադպրոցի մասով և Արմավիր համայնքի Մյասնիկյան բնակավայրի մարզադպրոցի մասով) միջոցառման, «1236. Հանրակրթական և նախադպրոցական հաստատությունների հիմնում, կառուցում, բարելավում» ծրագրի «11001. Հանրակրթական և նախադպրոցական հաստատությունների կառուցման, վերակառուցման, հիմնանորոգման ծրագրերի համակարգման և մոնիթորինգի ծառայություններ» միջոցառման, «32001. Մանկապարտեզների նոր շենքերի կառուցում» միջոցառման (այն օբյեկտների մասով, որոնց համար Հայաստանի Հանրապետության կառավարության 2024 թվականի հոկտեմբերի 3-ի N 1581-Ն որոշման N 1 հավելվածով պատվիրատու մարմին է սահմանված Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամը), ինչպես նաև «32003. Հանրակրթական դպրոցների նոր շենքերի կառուցում», «32004. Հանրակրթական դպրոցների շենքերի վերակառուցում, հիմնանորոգում» և «32005. Կրթահամալիրների կառուցում» միջոցառումների (այն օբյեկտների մասով, որոնց համար Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի նոյեմբերի 30-ի N 2093-Ն որոշման NN 1 և 3 հավելվածներով պատվիրատու մարմին է սահմանված Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամը) բյուջետային հատկացումների ստորադաս կարգադրիչի լիազորությունները (ներառյալ գնման գործընթացների պատվիրատուի ղեկավարի լիազորությունը) վերապահվում են Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամին.

24) որ «Հայաստանի Հանրապետության 2026 թվականի պետական բյուջեի մասին» օրենքով նախատեսված և Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությանը վերապահված՝ «1192. Կրթության

որակի ապահովում» ծրագրի «11024. ՀՀ պետական դպրոցների ԳՏՃՄ առարկաներ դասավանդող ուսուցիչների վերապատրաստում նոր ստանդարտներին համապատասխան» և «32007. ՀՀ պետական դպրոցների՝ ԳՏՃՄ լաբորատորիաներով ապահովում» միջոցառումների, ինչպես նաև «1236. Հանրակրթական և նախադպրոցական հաստատությունների հիմնում, կառուցում, բարելավում» ծրագրի «32006. Հանրակրթական դպրոցների, մանկապարտեզների և կրթահամալիրների գույքով և տեխնիկայով ապահովում» միջոցառման (դպրոցների և կրթահամալիրների լաբորատոր սարքերով և կահույքով ապահովման մասով) բյուջետային հատկացումների ստորադաս կարգադրիչի լիազորությունները (ներառյալ գնման գործընթացների պատվիրատուի ղեկավարի լիազորությունը) վերապահվում են «Կրթական ծրագրերի կենտրոն» ԾԻԳ-ին.

25) որ Հայաստանի Հանրապետության 2026 թվականի պետական բյուջեի «1236. Հանրակրթական և նախադպրոցական հաստատությունների հիմնում, կառուցում, բարելավում» ծրագրի շրջանակներում գլխավոր կարգադրիչը միջոցառումները կատարող պետական մարմինների առաջարկների հիման վրա կապիտալ շինարարության և հիմնանորոգման ծրագրերում (միջոցառումներում) ընդգրկված օբյեկտների գծով սահմանված հատկացումների միջեռամսյակային տեղաշարժերը, որոնք կատարվում են տվյալ միջոցառման տվյալ կատարողի տվյալ հոդվածով տարեկան և բոլոր եռամսյակներում ընդհանուր հատկացման, ինչպես նաև արդյունքային (կատարողական) ցուցանիշների պահպանմամբ, ներկայացված առաջարկին համաձայնելու դեպքում ինքնուրույն է իրականացնում սույն որոշման N 5 հավելվածի N 2 աղյուսակի փոփոխությունը, որի մասին ծանուցում է միջոցառումը կատարող մարմնին՝ միջեռամսյակային տեղաշարժը գանձապետական վճարահաշվարկային համակարգում մուտքագրելու նպատակով՝ փոփոխությունների մասին տեղեկացնելով նաև Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությանը.

26) որ Հայաստանի Հանրապետության 2026 թվականի պետական բյուջեի «1236. Հանրակրթական և նախադպրոցական հաստատությունների հիմնում, կառուցում, բարելավում» ծրագրի շրջանակներում գլխավոր կարգադրիչը միջոցառումները կատարող պետական մարմինների առաջարկների հիման վրա Հայաստանի

Հանրապետության պետական բյուջեի ծախսային միջոցառմամբ օբյեկտներով չբաշխված տողերով՝ գնումների մասին օրենսդրությամբ սահմանված կարգով կնքված պայմանագիր(գրեր) ունեցող օբյեկտների միջև բաշխումը, ինչպես նաև առանձին օբյեկտների գծով նախատեսված գումարների միջև փոփոխությունը, որոնք կատարվում են տվյալ միջոցառման տվյալ կատարողի տվյալ հոդվածով տարեկան և բոլոր եռամսյակներում ընդհանուր հատկացման, ինչպես նաև արդյունքային (կատարողական) ցուցանիշների պահպանմամբ, ներկայացված առաջարկին համաձայնելու դեպքում ինքնուրույն է իրականացնում «Հայաստանի Հանրապետության 2025 թվականի պետական բյուջեի մասին» օրենքի N 1 հավելվածի N 3 աղյուսակի, սույն որոշման N 5 հավելվածի N 2 աղյուսակի և N 10 հավելվածի փոփոխությունները, որոնց մասին ծանուցում է միջոցառումը կատարող մարմնին՝ փոփոխությունները գանձապետական վճարահաշվարկային համակարգում մուտքագրելու նպատակով՝ փոփոխությունների մասին տեղեկացնելով նաև Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությանը: Ընդ որում, առանձին օբյեկտների գծով նախատեսված գումարների միջև փոփոխությունը կատարելիս պահպանվում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 33-րդ կետի 9-րդ ենթակետով սահմանված կարգավորումը:

Ծրագրի գլխավոր կարգադրիչը սույն ենթակետի համաձայն կատարված փոփոխությունները պետք է մինչև դեկտեմբերի երկրորդ շաբաթվա ավարտը ներկայացնի Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմ՝ Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման ձևաչափով.

27) որ Հայաստանի Հանրապետության 2026 թվականի պետական բյուջեի «1236. Հանրակրթական և նախադպրոցական հաստատությունների հիմնում, կառուցում, բարելավում» ծրագրի «32006. Հանրակրթական դպրոցների, մանկապարտեզների և կրթահամալիրների գույքով և տեխնիկայով ապահովում» միջոցառման կատարող պետական մարմինները Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի նոյեմբերի 30-ի N 2093-Ն և Հայաստանի Հանրապետության կառավարության 2024 թվականի հոկտեմբերի 3-ի N 1581-Ն որոշումներով հաստատված ցանկերում (այսուհետ՝ Ցանկեր) ներառված դպրոցների, կրթահամալիրների և

մանկապարտեզների համար գույքի գնման գործընթացի արդյունքում առաջացած տնտեսումների օգտագործման նպատակով սույն որոշման N 10 հավելվածում կատարվող փոփոխությունները ներկայացնում են միջոցառման գլխավոր կարգադրիչին համաձայնեցման, և վերջինիս համաձայնությունը ստանալուց հետո գնումների պլանի փոփոխությունները կատարում են գնումների էլեկտրոնային համակարգում: Իրականացվող փոփոխությունները միջոցառման գլխավոր կարգադրիչը ներկայացնում է Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն՝ ի գիտություն: Ընդ որում, սույն ենթակետում նշված տնտեսումները կարող են օգտագործվել միայն Ցանկերում ներառված դպրոցների, կրթահամալիրների և մանկապարտեզների գույքի գնման նպատակով.

28) որ «Հայաստանի Հանրապետության 2026 թվականի պետական բյուջեի մասին» օրենքով նախատեսված և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարությանը վերապահված՝ «1126. Առողջապահության ոլորտում պետական քաղաքականության մշակում, ծրագրերի համակարգում և մոնիտորինգ» ծրագրի «31003. Առողջապահական կազմակերպությունների կառուցում, վերակառուցում» միջոցառման (այն օբյեկտների մասով, որոնց համար Հայաստանի Հանրապետության կառավարության 2024 թվականի դեկտեմբերի 19-ի N 2026-Ա որոշման հավելվածով և 2025 թվականի հուլիսի 31-ի N 1052-Ա որոշմամբ պատվիրատու մարմին է սահմանված Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամը) բյուջետային հատկացումների ստորադաս կարգադրիչի լիազորությունները (ներառյալ գնման գործընթացների պատվիրատուի ղեկավարի լիազորությունը) վերապահվում են Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամին.

29) Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության կողմից իրականացվող «1052. Քաղաքացիական կացության ակտերի գրանցում» ծրագրի «11001. Քաղաքացիական կացության ակտերի գրանցման ծառայությունների տրամադրում» միջոցառմամբ 2026 թվականի համար հաստատված՝ քաղաքացիական կացության ակտերի գրանցման ծառայության գործունեության կազմակերպման բնագավառում պետության կողմից համայնքների ղեկավարներին պատվիրակված

լիազորությունների իրականացման ծախսերը կատարել հիմք ընդունելով 2025 թվականին հաստատված նորմատիվները.

30) որ «Առողջության համընդհանուր ապահովագրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն Հայաստանի Հանրապետության 2026 թվականի պետական բյուջե ստացվող ապահովագրավճարի հաշվին հատկացումները նույն օրենքի 15-րդ հոդվածի 7-րդ մասին համապատասխան առողջության համընդհանուր ապահովագրության հիմնադրամին՝

ա. կատարվում են առանց սահմանափակման, ուղիղ վճարումների միջոցով՝ առանց հիմնավորող փաստաթղթեր գանձապետարան ներկայացնելու, և նշված վճարի տեսքով փաստացի ստացված եկամուտները և դրանց հաշվին կատարված ծախսերը սահմանված կարգով արտացոլվում են Հայաստանի Հանրապետության 2026 թվականի պետական բյուջեի կատարման հաշվետվություններում, ընդ որում, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունը յուրաքանչյուր ամսվա վերջին աշխատանքային օրը ապահովագրավճարի հաշվին առողջության համընդհանուր ապահովագրության հիմնադրամին իրականացվող փոխանցումների գծով փաստացի կատարված ծախսերի չափով ավելացնում է Հայաստանի Հանրապետության 2026 թվականի պետական բյուջեի եկամուտների և ծախսերի ծրագրային ցուցանիշները,

բ. հաշվառվում են բյուջետային ծախսերի ծրագրային դասակարգման 1202 «Ոչ վարակիչ հիվանդությունների բժշկական օգնության ապահովում» բյուջետային ծրագրի «11006. Առողջության համընդհանուր ապահովագրության ներդրմանն ուղղված լրացուցիչ միջոցառումներ» միջոցառմամբ.

31) որ Պետական մարմինները յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն են ներկայացնում տեղեկատվություն տրամադրված սուբսիդիաների մասին ըստ շահառուների՝ կցելով տվյալ եռամսյակում հաստատված հանձնման-ընդունման ակտերի պատճենները, իսկ նախադպրոցական, հանրակրթական, արտադպրոցական դաստիարակություն, արհեստագործական, միջին մասնագիտական, բուհական և հետբուհական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների մասով՝ նշված

տեղեկատվությունը տրամադրում են մինչև հաշվետու տարվան հաջորդող տարվա հունվարի 25-ը՝ կցելով հաշվետու տարում հաստատված հանձնման-ընդունման ակտերի պատճենները, եթե սուբսիդիան հատկացվել է ամենամյա ընթացիկ գործունեությունը ծավալելու նպատակով:

2. Հաստատել՝

1) օրենքով նախատեսված պետության կողմից Երևանի քաղաքապետին պատվիրակված լիազորությունների, սուբվենցիաների և այլ հատկացումների ֆինանսավորման այն ծրագրերի միջոցառումների ցանկը, որոնց գծով սույն որոշման N 4 հավելվածով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությանը վերապահված՝ միջոցառումը կատարող պետական կառավարման մարմնի իրավունքները փոխանցվում են Երևանի քաղաքապետարանին՝ համաձայն N 8 հավելվածի.

2) օրենքի N 1 հավելվածով նախատեսված տարեկան հատկացումների կատարման եռամյակային (աճողական) համամասնությունները՝ ըստ ֆինանսավորվող ծրագրերի և միջոցառումների, այդ միջոցառումները կատարող հանրային իշխանության մարմինների, բյուջետային ծախսերի գործառական և տնտեսագիտական դասակարգման տարրերի՝ համաձայն NN 3, 4 և 5 հավելվածների.

3) օրենքի N 1 հավելվածով սահմանված բյուջետային հատկացումների հաշվին պետության կարիքների (բացառությամբ արտասահմանում գտնվող Հայաստանի Հանրապետության պետական հիմնարկների և ներկայացուցիչների գործունեության ապահովման ծրագրերի, ինչպես նաև օտարերկրյա պետությունների, միջազգային կազմակերպությունների և այլ արտաքին դոնորների աջակցությամբ Հայաստանի Հանրապետությունում իրականացվող նպատակային ծրագրերի) համար 2026 թվականին իրականացվող գնումների պլանը՝ ըստ բյուջետային ծախսերի ծրագրային և գործառական դասակարգման և ըստ ծրագրերի միջոցառումները կատարող հանրային իշխանության մարմինների՝ համաձայն N 10 հավելվածի.

4) Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության կողմից իրականացվող «1118 Համագործակցություն միջազգային կազմակերպություն-ների հետ» ծրագրի «12001 Միջազգային կազմակերպություններին ՀՀ անդամակցության վճարներ» միջոցառմամբ նախատեսված միջազգային կազմակերպություններին Հայաստանի Հանրապետության անդամակցության վճարների գծով հատկացումների ընդհանուր գումարի բաշխումն ըստ առանձին կազմակերպությունների՝ համաձայն N 11 հավելվածի:

3. Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարին՝

1) Հայաստանի Հանրապետության կառավարություն ներկայացնել առաջարկու-թյուններ՝

ա. օրենքի 9-րդ հոդվածի 6-8-րդ, 10-րդ մասերով, 12-րդ մասի 2-4-րդ կետերով և 13-16-րդ մասերով Հայաստանի Հանրապետության կառավարությանը վերապահված իրավասությունների իրականացման վերաբերյալ (անհրաժեշտության դեպքում),

բ. «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասով Հայաստանի Հանրապետության կառավարությանը վերապահված իրավասությունների վերաբերյալ (անհրաժեշտության դեպքում).

2) Հայաստանի Հանրապետության 2026 թվականի պետական բյուջեով նախատեսված Հայաստանի Հանրապետության կառավարության պահուստային ֆոնդից հատկացումներ կատարելու վերաբերյալ Հայաստանի Հանրապետության պետական իշխանության մարմիններից ստացվող առաջարկությունները քննության առնել՝ այդ առաջարկությունները սույն որոշման 4-րդ կետի 9-րդ ենթակետով սահմանված պահանջներին համապատասխանելու դեպքում.

3) բյուջետային տարվա առանձին ժամանակահատվածներում Հայաստանի Հանրապետության պետական բյուջեում օրենքով հաստատված բյուջետային ելքերի ֆինանսավորման համար միջոցների անբավարարության առաջացման դեպքում, ժամանակավորապես՝ մինչև 2026 թվականի դեկտեմբերի 20-ը վերականգնելու պայմանով, ներգրավել առևտրային կազմակերպություններում պետական բաժնեմասի մասնավորեցումից (սեփականաշնորհումից) ստացված միջոցների կուտակման

նպատակով բացված գանձապետական միասնական հաշվի սեփականաշնորհման հատուկ ենթահաշվում միջոցների առկա մնացորդի՝ այդ օրենքով նախատեսված բյուջետային ելքերի ֆինանսավորմանը չուղղված գումարները՝ ներկայացնելով այդ ենթահաշվի շարժը Հայաստանի Հանրապետության 2026 թվականի պետական բյուջեի կատարման մասին հաշվետվությունում (առանձին հավելվածով).

4) Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության գանձապետարանի կողմից դուրս գրված կանխիկ դրամի ստացման չեկերի կանխիկացումն ապահովել Հայաստանի Հանրապետության առևտրային բանկերի հետ կնքված պայմանագրերին համապատասխան՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ ըստ պայմանագրի՝ բանկերին տրվող սպասարկման միջին վճարը չպետք է գերազանցի բանկերի կողմից կանխիկացված գումարի 0.1 տոկոսը.

5) օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերում նշված վճարումներն իրականացնել առանց սահմանափակման՝ դրանց գծով կատարված ծախսերը և ստացված եկամուտներն այդ կետին համապատասխան արտացոլելով Հայաստանի Հանրապետության 2026 թվականի պետական բյուջեի կատարման մասին հաշվետվություններում.

6) օրենքի 9-րդ հոդվածի 4-րդ մասում նշված վճարումներն իրականացնել Հայաստանի Հանրապետության 2026 թվականի պետական բյուջեով նախատեսված Հայաստանի Հանրապետության կառավարության պահուստային ֆոնդից այդ նպատակով հատկացումներ նախատեսող Հայաստանի Հանրապետության կառավարության համապատասխան որոշման առկայությամբ՝ դրանց գծով կատարված ծախսերը և ստացված եկամուտներն այդ կետին համապատասխան արտացոլելով Հայաստանի Հանրապետության 2026 թվականի պետական բյուջեի կատարման մասին հաշվետվություններում.

7) Հայաստանի Հանրապետության 2026 թվականի պետական բյուջեից Հայաստանի Հանրապետության համայնքներին սուբվենցիաներ հատկացնել համապատասխան համայնքների ղեկավարների և այդ սուբվենցիաների գծով հատկացումների կատարող, իսկ Երևան քաղաքի դեպքում գլխավոր կարգադրիչ հանդիսացող՝ Հայաստանի Հանրապետության պետական կառավարման մարմինների

միջև կնքված սուբվենցիաների տրամադրման պայմանների մասին պայմանագրերի առկայության դեպքում.

8) «Կուսակցությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան նյութական աջակցության համար օրենքի N 1 հավելվածի N 2 աղյուսակի «1024 ՀՀ Ազգային ժողովի լիազորությունների իրականացման ապահովում» ծրագրի «12002 Աջակցություն կուսակցություններին և կուսակցությունների դաշինք-ներին» միջոցառմամբ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի աշխատակազմի գծով նախատեսված ծախսերի ֆինանսավորումը սույն որոշման 1-ին կետի 11-րդ ենթակետի համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ հաստատված բաշխմամբ իրականացնել կուսակցությունների և կուսակցությունների դաշինքների բանկային հաշիվներին փոխանցման միջոցով՝ նրանց կողմից Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի աշխատակազմ ներկայացված գրավոր պահանջագրի հիման վրա՝ առանց լրացուցիչ փաստաթղթեր ներկայացնելու.

9) ապահովել պետական սեփականություն հանդիսացող բաժնեմաս (բաժնետոմս) ունեցող ընկերություններում պետական սեփականություն հանդիսացող բաժնեմասին (բաժնետոմսին) համապատասխանող շահութաբաժինների՝ Հայաստանի Հանրապետության 2026 թվականի պետական բյուջե վճարման (բացառությամբ Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումներով շահութաբաժինների վճարումից ազատված ընկերությունների), իսկ 50 տոկոս և ավելի պետական սեփականություն հանդիսացող բաժնեմաս (բաժնետոմս) ունեցող այն ընկերու-թյունների գծով, որոնց լիազորված մարմինները ներկայացնում են շահութաբաժինների սահմանված չափի նվազեցման վերաբերյալ առաջարկություններ՝ նաև զուտ շահույթի բաշխման գործընթացի նկատմամբ հսկողությունը.

10) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ներկայացվող՝ Հայաստանի Հանրապետության 2026 թվականի պետական բյուջեի կատարման մասին եռամսյակային հաշվետվություններում օրենքի 2-րդ, 3-րդ և 6-րդ հոդվածներով, 8-րդ հոդվածի 3-րդ մասով հաստատված բյուջետային մուտքերի և ելքերի գումարները, սույն որոշմամբ սահմանված բյուջետային մուտքերի և ելքերի

եռամսյակային (աճողական) ցուցանիշները, ինչպես նաև դրանց դիմաց ստացված մուտքերն ու կատարված ելքերն արտահայտել օրենքի 7-րդ հոդվածի 11-րդ մասի և 9-րդ հոդվածի պահանջներին համապատասխան՝ հաշվի առնելով նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2025 թվականի դեկտեմբերի 4-ի N 1761-Ն որոշմամբ հաստատված կարգի շրջանակներում կատարված վերաբաշխումները, տեղաշարժերը, լրացումները և փոփոխությունները.

11) օրենքի N 1 հավելվածի՝

ա. «1108 Հանրային ֆինանսների կառավարման բնագավառում պետական քաղաքականության մշակում, ծրագրերի համակարգում և մոնիթորինգ» ծրագրի «11003 ՀՀ միջազգային վարկանիշի տրամադրում» միջոցառմամբ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության գծով նախատեսված ծախսերի ֆինանսավորումը սույն որոշման համաձայն իրականացնել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության գանձապետարանում նշված ծրագրերի համար բացված գանձապետական հաշիվներից միջոցների ելքագրման միջոցով՝ այդ ծրագրով նախատեսված ծառայությունները մատուցող կազմակերպու-թյունների կողմից Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն ներկայացված գրավոր պահանջի (ինվոյսի) հիման վրա՝ առանց լրացուցիչ փաստաթղթեր ներկայացնելու,

բ. «1108 Հանրային ֆինանսների կառավարման բնագավառում պետական քաղաքականության մշակման, ծրագրերի համակարգման և մոնիթորինգ» ծրագրի «11001 Պլանավորում, բյուջետավորում, գանձապետական ծառայություններ, պետական պարտքի կառավարում տնտեսական և հարկաբյուջետային քաղաքականության մշակում և մոնիթորինգ» միջոցառմամբ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության և Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների կոմիտե հիմնադրամի (IASCF) միջև կնքված «Սահմանափակ տարածքներում հեղինակային իրավունքից հրաժարվելու վերաբերյալ» համաձայնագրի շրջանակներում Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության գծով նախատեսված ծախսերի ֆինանսավորումը սույն որոշման համաձայն իրականացնել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության

գանձապետարանում այդ ծրագրի համար բացված գանձապետական հաշվից միջոցների ելքագրման միջոցով՝ սույն պարբերությունում նշված հիմնադրամի կողմից Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն ներկայացված գրավոր պահանջի (ինվոյսի) հիման վրա՝ առանց լրացուցիչ փաստաթղթեր ներկայացնելու,

գ. «1006 Պետական պարտքի կառավարում» ծրագրի «11002 Արտարժութային պետական պարտատոմսերի թողարկմանն առնչվող ծախսեր» միջոցառման բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Այլ ծախսեր» հոդվածով և «11004 Պարտքի կառավարմանն առնչվող տեղեկատվական համակարգերի և ծրագրերի սպասարկում» միջոցառման բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Այլ ծախսեր» հոդվածով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության գծով նախատեսված ծախսերի ֆինանսավորումը սույն որոշման համաձայն իրականացնել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության գանձապետարանում այդ ծրագրերի համար բացված գանձապետական հաշվից միջոցների ելքագրման միջոցով՝ այդ ծրագրերով նախատեսված ծառայությունները մատուցող կազմակերպությունների կողմից Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն ներկայացված գրավոր պահանջի (ինվոյսի) հիման վրա՝ առանց լրացուցիչ փաստաթղթեր ներկայացնելու.

12) Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումներով, Հայաստանի Հանրապետության 2026 թվականի պետական բյուջեով նախատեսված և սույն որոշման N 5 հավելվածով հաստատված «1139 ՀՀ կառավարության պահուստային ֆոնդ» ծրագրի (սույն ենթակետում այսուհետ՝ հիմնական ծրագիր) «11001 ՀՀ կառավարության պահուստային ֆոնդ» միջոցառման (սույն ենթակետում այսուհետ՝ հիմնական միջոցառում) շրջանակներում նախատեսված հատկացումների գումարից Հայաստանի Հանրապետության 2026 թվականի պետական բյուջեով նախատեսված ելքերի լրացուցիչ ֆինանսավորման և բյուջետային երաշխիքների ապահովման ելքերի նպատակով գումարների հատկացման դեպքում, այդ հատկացումների չափով նվազեցնել հիմնական ծրագրի և հիմնական միջոցառման համար Հայաստանի Հանրապետության կառավարության համար նախատեսված հատկացումների չափը և նույն չափով ավելացնել համապատասխան ծրագրերի

միջոցառումների, ինչպես նաև այդ ծրագրերի, դրանց իրականացման համար պատասխանատու բյուջետային հատկացումների գլխավոր կարգադրիչների և այդ միջոցառումները կատարող պետական մարմինների գծով նախատեսված հատկացումների չափերը:

Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումներով, հիմնական ծրագրի և միջոցառման շրջանակներում նախատեսված հատկացումների գումարից Հայաստանի Հանրապետության 2026 թվականի պետական բյուջեով չնախատեսված ելքերի ֆինանսավորման նպատակով գումարների հատկացման դեպքում բյուջետային ծախսերի ծրագրային դասակարգման մեջ ավելացնել նոր ծրագրեր և (կամ) միջոցառումներ՝ ելնելով այդ ելքերի ուղղություններից, նպատակներից, ակնկալվող արդյունքներից և դրանց համար պատասխանատու պետական մարմիններից: Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով չնախատեսված ելքերի ֆինանսավորման նպատակով գումարների հատկացումների չափով նվազեցնել հիմնական ծրագրով և հիմնական միջոցառմամբ Հայաստանի Հանրապետության կառավարության համար նախատեսված հատկացումների չափը և այդ նվազեցված գումարի չափով ավելացնել համապատասխան նոր բյուջետային ծրագրերի և (կամ) միջոցառումների, ինչպես նաև այդ ծրագրերի և (կամ) միջոցառումների իրականացման համար պատասխանատու բյուջետային հատկացումների գլխավոր կարգադրիչների և այդ միջոցառումները կատարող պետական մարմինների գծով հատկացումների չափերը:

Այն դեպքում, երբ հիմնական ծրագրի և միջոցառման շրջանակներում հատկացումները կատարվում են հիմնական միջոցառման համար սահմանված հատկացումներին ամրագրված բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածներից (սույն ենթակետում այսուհետ՝ բազային հոդվածներ) տարբերվող այլ հոդվածներով (սույն ենթակետում այսուհետ՝ տարբերվող հոդվածներ), սույն ենթակետում նշված Հայաստանի Հանրապետության կառավարության համապատասխան որոշումներով տարբերվող հոդվածներով և համապատասխան պետական մարմինների գծով նախատեսված հատկացումների չափով ավելացնել համապատասխան ծրագրի և միջոցառման գծով այդ պետական մարմինների նույն

այդ տարբերվող հոդվածներով նախատեսված հատկացումները՝ նույն չափով պակասեցնելով բազային հոդվածներով և Հայաստանի Հանրապետության կառավարության համար նախատեսված հատկացումները: Հայաստանի Հանրապետության 2026 թվականի պետական բյուջեի կատարման մասին հաշվետվություններում սույն ենթակետում նշված հատկացումներն արտացոլել Հայաստանի Հանրապետության կառավարության համապատասխան որոշումներով հատկացված գումարների չափով:

Համանման մոտեցում կիրառել նաև օրենքի N 1 հավելվածի N 2 աղյուսակի «1185 Արտասահմանյան պատվիրակությունների ընդունելությունների և պաշտոնական գործուղումների կազմակերպում» ծրագրի «11001 Արտասահմանյան պատվիրակությունների ընդունելություններ» միջոցառմամբ և «1195 Հասարակության և պետության հանդեպ հատուկ ծառայություններ ունեցած քաղաքացիների մահվան դեպքում արարողակարգային միջոցառումների կազմակերպում» ծրագրի «11001 Հասարակության և պետության հանդեպ հատուկ ծառայություններ ունեցած քաղաքացիների մահվան դեպքում հրաժեշտի ծիսակատարության և թաղման կազմակերպում, գերեզմանի բարեկարգման և մահարձանի պատրաստման ու տեղադրման աշխատանքներին աջակցություն» միջոցառմամբ Հայաստանի Հանրապետության վարչապետի կողմից ընդունված որոշումներով, ինչպես նաև «1161 Հանրային ֆինանսների և սեփականության ոլորտում հաշվեքննություն» ծրագրի «11002 ՀՀ հաշվեքննիչ պալատի պահուստային ֆոնդ», «1092 ՀՀ սահմանադրական դատարանի գործունեության ապահովում» ծրագրի «11002 ՀՀ սահմանադրական դատարանի պահուստային ֆոնդ», «1080 Դատական իշխանության գործունեության ապահովում և իրականացում» ծրագրի «11018 Բարձրագույն դատական խորհրդի և ՀՀ դատարանների պահուստային ֆոնդի ձևավորում և կառավարում», «1087 Դատավարական ղեկավարում և դատախազական հսկողություն» ծրագրի «11002 ՀՀ դատախազության պահուստային ֆոնդ», ինչպես նաև «1231 Կոռուպցիոն հանցագործությունների բացահայտման և քննության ապահովում» ծրագրի «11002 ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի պահուստային ֆոնդ» և «1180 ՀՀ քննչական ծառայություններ» ծրագրի «11003 ՀՀ քննչական կոմիտեի պահուստային ֆոնդ» միջոցառումներով իրավասու մարմին ընդունված որոշումներով հատկացումների կատարման դեպքում.

13) դրական եզրակացություն չտալ Հայաստանի Հանրապետության 2026 թվականի պետական բյուջեով նախատեսված Հայաստանի Հանրապետության կառավարության պահուստային ֆոնդից հատկացումներ նախատեսող այն Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծերին, որոնցով առաջարկվող հատկացումների եռամսյակային բաշխման (աճողական) գումարների ընդունումը կհանգեցնի օրենքով նախատեսված «ՀՀ կառավարության պահուստային ֆոնդ» ծախսային ծրագրի գծով հաստատված հատկացումների՝ սույն որոշման N 5 հավելվածով սահմանված եռամսյակային բաշխման (աճողական) գումարների գերազանցմանը:

4. Հայաստանի Հանրապետության հանրային իշխանության և տարածքային կառավարման մարմինների ղեկավարներին՝

1) 2026 թվականի վերջին աշխատանքային օրվա ավարտին՝ համակարգի բյուջետային հիմնարկների (ներառյալ օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների աջակցությամբ Հայաստանի Հանրապետությունում իրականացվող վարկային և դրամաշնորհային ծախսային ծրագրեր իրականացնող գրասենյակների հաշիվներում Հայաստանի Հանրապետության կառավարության համաֆինանսավորման գումարները) դրամարկղերում և գանձապետական հաշիվներում Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների առկա մնացորդները 2026 թվականի բյուջետային տարվա վերջին օրվան հաջորդող աշխատանքային օրվա ընթացքում փոխանցել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե՝ որպես 2026 թվականի բյուջետային տարում չօգտագործված միջոցներ.

2) ձեռնարկել բոլոր անհրաժեշտ միջոցները Հայաստանի Հանրապետության 2026 թվականի պետական բյուջեով նախատեսված՝ արտաքին աղբյուրներից վարկերի և պաշտոնական դրամաշնորհների ստացման նախապայմանների ապահովման համար.

3) սահմանել խիստ հսկողություն ենթակա հիմնարկների կողմից իրականացվող ծախսերի նկատմամբ, կանխել և թույլ չտալ հաստատված նախահաշիվների առանձին ծախսային հոդվածների նկատմամբ փաստացի ծախսերի գերազանցում.

4) Հայաստանի Հանրապետության հանրային իշխանության մարմիններին և դրանց ենթակայության պետական հիմնարկներին, պետական ոչ առևտրային կազմակերպություններին ամրացված գույքի (այդ թվում՝ տարածքների) վարձակալության պայմանագրերում, վարձատուի համաձայնությամբ, վարձակալի կողմից իր միջոցների հաշվին վարձակալված գույքից (այդ թվում՝ տարածքից) անբաժանելի բարելավումների կատարման հնարավորություն նախատեսել միայն այդ բարելավումների արժեքի՝ ինչպես պայմանագրի գործողության ընթացքում, այնպես էլ պայմանագրի գործողության դադարեցումից հետո վարձատուի կողմից փոխհատուցման բացառման վերաբերյալ դրույթի նախատեսման դեպքում: Մինչև սույն որոշումն ուժի մեջ մտնելը՝ կնքված վարձակալության պայմանագրերի գործողության ընթացքում, առանց Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության թույլտվության, չհամաձայնել նշված բարելավումների իրականացմանը.

5) Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությանը տրամադրել սույն որոշման N 6 հավելվածով սահմանված՝ Հայաստանի Հանրապետության 2026 թվականի պետական բյուջեի եռամսյակային կտրվածքով ծրագրավորված եկամուտների հավաքագրման արդյունքների և դրանց՝ ծրագրային ցուցանիշներից շեղումների պատճառների մասին հաշվետվություն (յուրաքանչյուր մարմինը՝ իր մասով, ըստ առանձին եկամտատեսակների)՝ մինչև տվյալ եռամսյակի վերջին ամսվան հաջորդող երկրորդ ամսվա 5-ը.

6) Հայաստանի Հանրապետության 2026 թվականի պետական բյուջեից համայնքներին տրամադրվող սուբվենցիաների գծով հատկացումների գլխավոր կարգադրիչ հանդիսանալու դեպքում այդ սուբվենցիաները տրամադրելու համար Հայաստանի Հանրապետության համապատասխան համայնքների ղեկավարների հետ կնքել սուբվենցիաների տրամադրման պայմանների մասին պայմանագրեր (վերջիններում այլ պայմանների հետ հանդերձ պարտադիր նշելով համայնքների կողմից ստացված սուբվենցիաների ոչ նպատակային ծախսված միջոցների Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վերադարձման պահանջը).

7) բյուջետային հատկացումների գլխավոր կարգադրիչ հանդիսանալու դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի ավարտից հետո 25-օրյա ժամկետում

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն ներկայացնել բացատրագիր իրենց կողմից իրականացվող ծրագրերի և դրանց միջոցառումների գծով սույն որոշմամբ սահմանված բյուջետային հատկացումների եռամսյակային (աճողական) սահմանաքանակների չիրացման պատճառների և ստանձնած պարտավորությունների գծով ծախսային ապառքների վերաբերյալ, ինչպես նաև տեղեկատվություն այդ սահմանաքանակների չիրացված մասի՝ 2026 թվականի մնացած ժամանակահատվածում իրացման գծով ձեռնարկված միջոցների կամ այդ մասի հետագա իրացման աննպատակահարմարության կամ անհնարինության մասին: Բյուջետային հատկացումների գլխավոր կարգադրիչ չհանդիսացող՝ սույն որոշման N 4 հավելվածով սահմանված բյուջետային ծրագրերի միջոցառումները կատարող պետական կառավարման մարմինների դեպքում սույն ենթակետով նախատեսված բացատրագրերը ներկայացնել համապատասխան ծրագրերի գծով բյուջետային հատկացումների գլխավոր կարգադրիչ հանդիսացող պետական մարմիններին՝ յուրաքանչյուր եռամսյակի ավարտից հետո՝ 15-օրյա ժամկետում.

8) ապահովել պատշաճ հսկողություն ենթակա պետական հիմնարկների և կազմակերպությունների կողմից սույն որոշման N 5 հավելվածի «1015 սոցիալական փաթեթների ապահովում» ծրագրի «12001 Պետական հիմնարկների և կազմակերպությունների աշխատողների սոցիալական փաթեթով ապահովում» միջոցառմամբ նախատեսված հատկացումների՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շրջանակներում նպատակային օգտագործման նկատմամբ.

9) Հայաստանի Հանրապետության 2026 թվականի պետական բյուջեով նախատեսված Հայաստանի Հանրապետության կառավարության պահուստային ֆոնդից հատկացումներ կատարելու վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարություն կամ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն առաջարկություններ ներկայացնելիս՝ դրանց հետ տրամադրել տեղեկատվություն նշված հատկացման հասցեատեր հանդիսացող ոլորտին Հայաստանի Հանրապետության 2026 թվականի պետական բյուջեով նախատեսված հատկացումներից Հայաստանի Հանրապետության կառավարության պահուստային ֆոնդ նույն չափի գումար վերաբաշխելու հնարավորության մասին (անհրաժեշտության դեպքում այն

նախապես համաձայնեցնելով տվյալ ոլորտում պետական կառավարում իրականացնող պետական կառավարման մարմնի հետ).

10) սույն որոշման 6-րդ կետի 1-ին ենթակետում, 9-րդ կետում, 10-րդ կետի 4-րդ ենթակետում, 11-րդ կետի 1-ին ենթակետում, 12-րդ, 13-րդ, 16-րդ և 17-րդ կետերում նշված՝ պետական պատվերների, ծրագրերի, միջոցառումների և ծախսերի գծով վճարումները կատարել այդ պատվերների, ծրագրերի, միջոցառումների և ծախսերի գծով հատկացումների գլխավոր կարգադրիչների կողմից հաստատվող գերատեսչական ակտերը դրանք ընդունող գերատեսչությունների պաշտոնական վեբկայքում հրապարակվելուց հետո.

11) բյուջետային հատկացումների գլխավոր կարգադրիչ հանդիսանալու դեպքում սույն որոշման 1-ին կետի 17-րդ ենթակետի պահանջներին համապատասխան պատշաճ հսկողություն իրականացնել իրենց պատասխանատվությամբ իրականացվող ծրագրերի միջոցառումները կատարող այլ պետական կառավարման մարմինների կողմից համապատասխան միջոցառումների կատարման ընթացքի նկատմամբ.

12) սույն որոշման N 4 հավելվածով սահմանված բյուջետային ծրագրերի միջոցառումները կատարող, սակայն համապատասխան միջոցառումների գծով բյուջետային հատկացումների գլխավոր կարգադրիչ չհանդիսացող պետական մարմիններ հանդիսանալու դեպքում, համապատասխան միջոցառումների կատարման ընթացքի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված համապատասխան հաշվետվությունները ներկայացնել համապատասխան ծրագրերի միջոցառումների գծով բյուջետային հատկացումների գլխավոր կարգադրիչ հանդիսացող հանրային իշխանության մարմիններին, միաժամանակ ըստ անհրաժեշտության ներկայացնելով անհրաժեշտ բացատրություններ կատարման ընթացքում առաջացած շեղումների, ռիսկերի և դրանց կարգավորման ուղղությամբ ձեռնարկվող միջոցառումների վերաբերյալ.

13) 2026 թվականի պետական բյուջեից առանց մրցույթի դրամաշնորհի ձևով իրավաբանական անձանց տրամադրվող հատկացումների շրջանակում կնքվելիք դրամաշնորհի պայմանագրում նախատեսել դրույթ այն մասին, որ դրամաշնորհի

պայմանագրով նախատեսված միջոցառումների տարեկան արդյունքները պետական մարմնի կողմից ընդունվելուց հետո իրավաբանական անձը միջոցառումների իրականացման արդյունքում առաջացած տնտեսումները (խնայողությունները) վերադարձնում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջե՝ ոչ ուշ, քան մինչև 2027 թվականի հունվարի 24-ը.

14) Հայաստանի Հանրապետությանը տրամադրված վարկային միջոցների և դրամաշնորհների հաշվին օտարերկրյա պետություններ գործուղումները (ներառյալ ուսուցման և մասնագիտական վերապատրաստման) իրականացնելիս առաջնորդվել Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի սեպտեմբերի 19-ի N 1230-Ն որոշմամբ.

15) մինչև 2026 թվականի մարտի 31-ը՝

ա. լիազոր մարմնի պաշտոնական կայքում հրապարակել համակարգում գործող պետական ոչ առևտրային կազմակերպությունների աշխատողների թիվը, պաշտոնային դրույքաչափերը, խրախուսմանն ուղղվող միջոցների չափաքանակները, ինչպես նաև կազմակերպությունների կողմից շահագործվող տրանսպորտային միջոցների թիվը,

բ. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել պետության հիսուն տոկոսից ավելի բաժնեմաս ունեցող կազմակերպությունների և պետության կողմից ստեղծված հիմնադրամների մասով սույն ենթակետի «ա» պարբերությամբ նախատեսված պայմանների հաստատումը, իսկ հաստատումից հետո դրանք հրապարակել պաշտոնական կայքերում: Նշված տեղեկատվությունը ենթակա է հրապարակման լիազոր մարմնի պաշտոնական կայքում: Միանման գործունեություն ծավալող կազմակերպությունների մասով հրապարակման ենթակա է օրինակելի ձևը:

5. Պետական սեփականություն հանդիսացող բաժնեմաս (բաժնետոմս) ունեցող ընկերությունների բաժնետիրոջ իրավասություններ իրականացնող՝ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից լիազորված մարմինների ղեկավարներին՝ ապահովել՝

1) Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի մարտի 3-ի N 202-Ն որոշմամբ սահմանված չափով և հաստատված կարգով ու ժամկետներում շահութաբաժինների վճարումը Հայաստանի Հանրապետության 2026 թվականի պետական բյուջե.

2) պետական սեփականություն հանդիսացող բաժնեմաս (բաժնետոմս) ունեցող ընկերությունների՝ նախորդ տարիների ֆինանսատնտեսական գործունեության արդյունքում շահութաբաժինների գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ 2026 թվականի հունվարի 1-ի դրությամբ առաջացած պարտքերի մարումը՝ մինչև 2026 թվականի հուլիսի 1-ը:

6. Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարին՝

1) հաստատել և նախարարության պաշտոնական վեբկայքում հրապարակել՝

ա. «1146 Հանրակրթության ծրագրի» «11016 Կրթական հաստատությունների աշակերտներին դասագրքերով և ուսումնական գրականությամբ ապահովում» միջոցառման գծով նախատեսված հատկացումների բաշխումը՝ մինչև 2026 թվականի սեպտեմբերի 1-ը,

բ. «1115 Երիտասարդության ծրագրի» «11001 Երիտասարդական պետական քաղաքականությանն ուղղված ծրագրեր և միջոցառումներ» միջոցառման գծով նախատեսված հատկացումների բաշխումը, ըստ առանձին ուղղությունների՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո երկամսյա ժամկետում.

2) Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն ներկայացնել՝

ա. «1056 Կինեմատոգրաֆիայի ծրագրի» «11001 Կինոնկարների արտադրություն», «1168 Արվեստների ծրագրի» «11005 Մշակութային միջոցառումների իրականացում», «1124 Գրահրատարակչության և գրադարանների ծրագրի» «11002 Թարգմանական ծրագրեր և աջակցություն ստեղծագործողներին ու հետազոտողներին» և «11007 Գրականության հրատարակում» միջոցառումների գծով ծախսերի նախահաշիվներն՝ ըստ առանձին կինոնկարների, միջոցառումների և հրատարակումների՝ մինչև 2026 թվականի հուլիսի 1-ը,

բ. «1041 Մեծ նվաճումների սպորտ» ծրագրի «12003 Օլիմպիական խաղերում, աշխարհի և Եվրոպայի առաջնություններում բարձր արդյունքների հասած Հայաստանի Հանրապետության հավաքական թիմերի մարզիկներին և նրանց մարզիչներին անվանական թոշակի հատկացում» միջոցառման շրջանակներում բարձր արդյունքների հասած՝ Հայաստանի Հանրապետության հավաքական թիմերի մարզիկների և նրանց մարզիչների 2026 թվականի ցուցակը՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո մեկամսյա ժամկետում,

գ. «1041 Մեծ նվաճումների սպորտ ծրագրի» «21001 Հայաստանում Ֆրանկոֆոնիայի խաղերի անցկացման համար անհրաժեշտ ենթակառուցվածքների ապահովում», «11051 Հայաստանում Ֆրանկոֆոնիայի մարզամշակութային խաղերի նախապատրաստում և անցկացում» և «1163 Մասսայական սպորտ ծրագրի» «11027 Բասկետբոլի դպրոցականների լիգայի անցկացում» միջոցառումների գծով ծախսերի նախահաշիվները՝ մեկամսյա ժամկետում:

7. Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո մեկամսյա ժամկետում Հայաստանի Հանրապետության կառավարություն ներկայացնել առաջարկություններ Հայաստանի Հանրապետության 2026 թվականի պետական բյուջեով սույն որոշման NN 4 և 9.1 հավելվածներում «1015 սոցիալական փաթեթների ապահովում» ծրագրի «12001 Պետական հիմնարկների և կազմակերպությունների աշխատողների սոցիալական փաթեթով ապահովում» միջոցառմամբ «Այլ մարմիններ» միջոցառման կատարողին նախատեսված հատկացումներն ըստ պետական կառավարման համակարգի մարմինների եռամսյակային (աճողական) կտրվածքով բաշխելու վերաբերյալ:

8. Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարին՝

1) սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո երկշաբաթյա ժամկետում Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն ներկայացնել Հայաստանի Հանրապետության 2026 թվականի պետական բյուջեով «1118 Համագործակցություն միջազգային կազմակերպությունների հետ» ծրագրի «12001 Միջազգային կազմակերպություններին ՀՀ անդամակցության վճարներ» միջոցառմամբ՝ միջազգային կազմակերպություններին Հայաստանի Հանրապետության անդամակցության վճարների գծով նախատեսված

հատկացումների ընդհանուր գումարի բաշխումն ըստ առանձին կազմակերպությունների՝ եռամսյակային (աճողական) կտրվածքով.

2) սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն ներկայացնել տարեկան հաշվետվություն սույն որոշման N 11 հավելվածում նշված ցուցանիշների կատարման վերաբերյալ: Հաշվետու ժամանակահատվածում նույն միջազգային կազմակերպության գծով կատարված մեկից ավելի վճարումները, որոնք կատարվել են տարբեր օրերի և տարբեր փոխարժեքներով, ներկայացվում են մեկ միասնական ցուցանիշով, որը հավասար է տվյալ միջազգային կազմակերպության գծով կատարված վճարումների փաստացի չափերի հանրագումարին՝ արտահայտված ՀՀ դրամով:

9. Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո մեկամսյա ժամկետում հաստատել և նախարարության պաշտոնական վեբկայքում հրապարակել փորձաքննությունների կատարման ծառայությունների ձեռքբերման գծով 2026 թվականի պետական պատվերը:

10. Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարին՝

1) օրենքով նախատեսված պետության կողմից Երևանի քաղաքապետին պատվիրակված լիազորությունների ֆինանսավորման ծրագրերի գծով սույն որոշման N 4 հավելվածով համապատասխան միջոցառումները կատարող պետական կառավարման մարմնի՝ Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությանը վերապահված իրավունքները վերապահել Երևանի քաղաքապետարանին՝ պայմանով, որ Երևանի քաղաքապետարանի կողմից՝ այդ լիազորությունների իրականացման հետ կապված ծախսերը պետք է իրականացվեն պետական կառավարչական հիմնարկների կողմից 2026 թվականին իրականացվող նմանատիպ ծախսերի կատարման և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և սույն որոշմամբ սահմանված ընթացակարգերին համապատասխան.

2) սույն որոշման N 8 հավելվածում ներկայացված ծրագրերի միջոցառումների գծով նախատեսված բյուջետային միջոցների տնօրինման և դրա շրջանակներում Հայաստանի Հանրապետության 2026 թվականի պետական բյուջեի կատարման

մասին հաշվետվությունները սահմանված կարգով կներկայացվեն Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածք ների նախարարություն և համապատասխան ծրագրերի գծով բյուջետային հատկացումների գլխավոր կարգադրիչ հանդիսացող պետական մարմիններ.

3) սույն որոշման N 4 հավելվածով սահմանված «1157 Քաղաքային զարգացում» ծրագրի «12008 Երևանի մետրոպոլիտենով ուղևորափոխադրման ծառայությունների գծով պետության կողմից համայնքի ղեկավարին պատվիրակված լիազորությունների իրականացում» միջոցառմամբ նախատեսված 1,000,000.0 հազ. դրամ գումարից 485,663.0 հազ. դրամն ուղղվելու է «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» փակ բաժնետիրական ընկերության գործառնական գործունեության արդյունքում առաջացող ֆինանսական ճեղքվածքի ծածկմանը, իսկ 514,337.0 հազ. դրամը՝ Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի և Եվրոպական ներդրումային բանկի վարկային ծրագրերով ենթավարկային պայմանագրերով ընկերությանը նախատեսված վարկերի գծով առաջացող պարտավորությունների կատարմանը.

4) Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության և Երևանի քաղաքապետարանի միջև կնքվող սուբվենցիաների տրամադրման պայմանագրերում նախատեսել, որ սուբվենցիաների գումարների նպատակային օգտագործման նկատմամբ Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունն իրականացնում է նախնական փաստաթղթային հսկողություն, իսկ հետավարտական հսկողությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից լիազորված պետական կառավարման մարմինը՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով.

5) «1110 Այլընտրանքային աշխատանքային ծառայություն» ծրագրի «12001 Այլընտրանքային աշխատանքային ծառայողներին դրամական բավարարման և դրամական փոխհատուցման տրամադրում» միջոցառմամբ Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության (որպես միջոցառումը կատարող պետական կառավարման մարմնի) գծով նախատեսված ֆինանսական միջոցները փոխանցել Երևանի քաղաքապետարանին՝

Երևան քաղաքի այլընտրանքային աշխատանքային ծառայության վայրի կազմակերպությունների միջոցով այլընտրանքային աշխատանքային ծառայողների դրամական բավարարման գումարները վճարելու համար.

6) սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո երկամսյա ժամկետում Հայաստանի Հանրապետության կառավարության հաստատմանը ներկայացնել «1212 Տարածքային զարգացում» ծրագրի «12003 Պետական աջակցություն սահմանամերձ համայնքներին» միջոցառման գծով նախատեսված հատկացումների բաշխումը՝ ըստ հանրային իշխանության և տարածքային կառավարման մարմինների՝ որպես արդյունքային ցուցանիշ ներկայացնելով նաև միջոցառման շրջանակներում աջակցության յուրաքանչյուր տեսակի գծով տրամադրվող պետական աջակցություն ստացող շահառուների քանակը.

7) սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո երկամսյա ժամկետում հաստատել և նախարարության պաշտոնական վեբկայքում հրապարակել «1004 Ոռոգման համակարգի առողջացում» ծրագրի «11002 Ոռոգման ծառայություններ մատուցող ընկերություններին ֆինանսական աջակցության տրամադրում» միջոցառմամբ ոռոգման ծառայություններ մատուցող ընկերություններին 2026 թվականի ֆինանսական աջակցության տրամադրման չափաքանակները՝ ըստ առանձին ջրօգտագործողների ընկերությունների:

11. Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարին՝

1) սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո երկամսյա ժամկետում հաստատել և նախարարության պաշտոնական վեբկայքում հրապարակել հետևյալ միջոցառումների գծով համապատասխան ծրագրեր՝

ա. «1104 Գիտելիքահենք, նորարարական տնտեսությանը և փոքր ու միջին ձեռնարկատիրությանը աջակցություն» ծրագրի «11001 ՓՄՁ-ի սուբյեկտներին աջակցության ծրագրերի համակարգում և կառավարում» միջոցառում,

բ. «1165 Ներդրումների և արտահանման խթանման ծրագիր» ծրագրի «11002 ՀՀ արտահանմանն ուղղված արդյունաբերական քաղաքականության ռազմավարու-

թյամբ նախատեսված միջոցառումներ», «12002 Տեքստիլ ոլորտի կազմակերպությունների համար մատակարարման շղթաների դիվերսիֆիկացիայի ապահովմանն ուղղված պետական աջակցություն» միջոցառումներ,

գ. «1190 Զբոսաշրջության զարգացման ծրագիր» ծրագրի «11002 Աջակցություն զբոսաշրջության զարգացմանը» միջոցառում.

2) սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո երկամսյա ժամկետում Հայաստանի Հանրապետության կառավարության հաստատմանը ներկայացնել «1067 Ստանդարտների մշակում և հավատարմագրման համակարգի զարգացում» ծրագրի «11001 Ստանդարտների մշակման ծառայություններ» և «1104 Գիտելիքահենք, նորարարական տնտեսությանը և փոքր ու միջին ձեռնարկատիրությանը աջակցություն» ծրագրի «11005 Մասնագիտական կարողությունների զարգացման նպատակով շահառուներին պետական աջակցություն» միջոցառումների գծով համապատասխան ծրագրեր:

12. Առաջարկել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո մեկամսյա ժամկետում հաստատել և Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության պաշտոնական վեբկայքում հրապարակել փորձաքննությունների կատարման ծառայությունների ձեռքբերման գծով 2026 թվականի պետական պատվերը:

13. Առաջարկել Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի նախագահին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո մեկամսյա ժամկետում հաստատել և Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի պաշտոնական վեբկայքում հրապարակել փորձաքննությունների կատարման ծառայությունների ձեռքբերման գծով 2026 թվականի պետական պատվերը:

14. Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո երկամսյա ժամկետում՝ հաստատել և նախարարության պաշտոնական վեբկայքում հրապարակել 1043 «Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության էկոհամակարգի և շուկայի զարգացման ծրագիր» ծրագրի հետևյալ ծրագրերը՝

ա. 11004 «Տեխնոլոգիական կարողությունների և հմտությունների զարգացում» միջոցառում,

բ. 11007 «Շուկաների զարգացում և միջազգային համագործակցություն» միջոցառում,

գ. 11009 «Ձեռներեցության տեխնոլոգիական էկոհամակարգ» միջոցառում:

15. Հանձնարարել Հայաստանի Հանրապետության մարզպետներին և առաջարկել Երևանի քաղաքապետին՝ սույն որոշման 4-րդ կետի 7-րդ ենթակետում նշված առաջարկությունները ներկայացնել Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի հետ համաձայնեցված:

16. Սույն որոշման N 1 հավելվածի N 5 աղյուսակում և NN 9 և 9.1 հավելվածներում ընդգրկված հանրային իշխանության մարմինների ղեկավարներին՝

1) սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն ներկայացնել եռամսյակային հաշվետվություններ սույն որոշման N 1 հավելվածի N 5 աղյուսակի և NN 9 և 9.1 հավելվածների՝ իրենց կողմից ղեկավարվող մարմիններին համապատասխանող աղյուսակներում նշված արդյունքային ցուցանիշների կատարման վերաբերյալ: Բյուջետային հատկացումների գլխավոր կարգադրիչ չհանդիսացող՝ բյուջետային ծրագրերի միջոցառումները կատարող պետական կառավարման մարմինները սույն ենթակետով սահմանված տեղեկատվությունը ներկայացնում են համապատասխան ծրագրերի գծով բյուջետային հատկացումների գլխավոր կարգադրիչ հանդիսացող պետական մարմինների միջոցով.

2) հաշվի առնելով, որ միջոցառումների գծով արդյունքային չափորոշիչների ցուցանիշները սահմանված են առաջին կիսամյակի և տարեկանի համար, ուստի առաջին եռամսյակի և 9 ամիսների հաշվետվություններում արդյունքային չափորոշիչների համար չի լրացվում «Հաշվետու ժամանակահատվածի պլանային (ճշտված) և փաստացի ցուցանիշների տարբերությունը» սյունակը, իսկ «Տարբերության պատճառը» սյունակում ներկայացվում են միայն այն ցուցանիշների բացատրությունները, որոնց գծով հաշվետու ժամանակահատվածում առաջացել են ռիսկեր առաջիկա հաշվետու ժամանակահատվածի համար հաստատված արդյունքային ցուցանիշների չկատարման կամ մասամբ կատարման գծով: Հաշվետու ժամանակահատվածի համար լրացվում է «Փաստացի ցուցանիշը հաշվետու ժամանակահատվածում» սյունակը:

17. Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմի ղեկավարին՝ հաստատել և աշխատակազմի պաշտոնական վեբկայքում հրապարակել Հայաստանի Հանրապետության 2026 թվականի պետական բյուջեով «1033 Աջակցություն հասարակական և այլ կազմակերպություններին» ծրագրի «12001 Պետական աջակցություն ազգային փոքրամասնությունների հասարակական կազմակերպություններին» միջոցառման գծով նախատեսված հատկացումների բաշխումը՝ ըստ առանձին ստացողների մինչև 2026 թվականի մարտի 1-ը:

18. Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի նախագահին՝ հաստատել և կոմիտեի պաշտոնական վեբկայքում հրապարակել փորձաքննությունների կատարման ծառայությունների ձեռքբերման գծով 2026 թվականի պետական պատվերը՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո մեկամսյա ժամկետում:

19. Միջազգային վարկատու կազմակերպություններից, օտարերկրյա պետություններից և այլ արտաքին աղբյուրներից Հայաստանի Հանրապետությանը տրամադրվող վարկային միջոցների հաշվին իրականացվող նպատակային վարկային ծրագրերի գծով՝

1) Հայաստանի Հանրապետությանը 2026 թվականի պետական բյուջեով նախատեսված բյուջետային հատկացումների գլխավոր կարգադրիչներ հանդիսացող Հայաստանի Հանրապետության հանրային իշխանության մարմինների ղեկավարներին՝ սահմանել խիստ հսկողություն, կանխել և թույլ չտալ միջազգային վարկատու կազմակերպություններից, օտարերկրյա պետություններից և այլ արտաքին աղբյուրներից Հայաստանի Հանրապետությանը տրամադրվող վարկային միջոցների հաշվին իրենց կողմից կարգավորվող ոլորտներում ծրագրեր իրականացնող գրասենյակների (անկախ դրանց կազմակերպական-իրավական ձևից) իրագործվող նպատակային վարկային ծրագրերի գծով օրենքի N 1 հավելվածի N 4 և N 3 հավելվածի N 1.1.1 աղյուսակներով ըստ յուրաքանչյուր նպատակային վարկային ծրագրի սահմանած ելքերի (ինչպես վարկային միջոցների, այնպես էլ Հայաստանի Հանրապետության կառավարության համաֆինանսավորման մասով) տարեկան, ինչպես նաև սույն որոշմամբ նախատեսված եռամսյակային (աճողական) գումարների

(ներառյալ ուղղակի վճարումների և բացված հատուկ պարտավորագրերի շրջանակներում կատարվող վճարումների մասով) գերազանցում (եթե Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից այլ բան նախատեսված չէ).

2) ծրագրերի իրականացման գրասենյակների հաշիվներին արտարժութային միջոցները մուտքագրելիս՝ կիրառվելու է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի սահմանած առքի փոխարժեքը, ծրագրերի իրականացման գրասենյակների կողմից արտարժութային ծախսերը հաշվառվելու են վաճառքի փոխարժեքով, իսկ արտարժութային մնացորդները դրամային արտահայտությամբ ձևավորվելու են համապատասխան գործարքների համար կիրառված փոխարժեքներով փոխարկումների արդյունքում ստացված գումարներից, իսկ վերագնահատումն իրականացվելու է յուրաքանչյուր օրվա համար և առանց սահմանափակման արտացոլվելու է պետական բյուջեի պակասուրդում, որպես մուտք կամ ելք:

20. Մինչև Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից համապատասխան մարմինների համար Հայաստանի Հանրապետության 2026 թվականի պետական բյուջեով նախատեսված հատկացումների հաշվին կանխիկ ձևով կատարվող ծախսերի և բանկային վճարային քարտերով շրջանառվող միջոցների չափաքանակների հաստատումը՝ թույլատրել այդ մարմիններին իրականացնել նմանատիպ գործառնություններ 2026 թվականի 1-ին եռամսյակի ընթացքում՝ հաստատված եռամսյակային համամասնությունների շրջանակում, նախորդ տարվա համար հաստատված չափաքանակներում ներառված հոդվածներով՝ տվյալ տնտեսագիտական հոդվածով հաստատված չափաքանակի 20 տոկոսի, իսկ էլեկտրոնային հարթակով ուղևորափոխադրման ծառայությունների գծով կատարված ծախսերի մասով՝ 2025 թվականի համար տարեկան ընդունված չափաքանակի 30 տոկոսի չափով՝ պայմանով, որ այդ կատարված գործառնությունների տվյալները կներառվեն 2026 թվականի համար տվյալ մարմնի կողմից առաջարկվող՝ Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծերի համապատասխան հավելվածներով՝ նշված նպատակով ներկայացվող չափաքանակներում: 2026 թվականի համար կանխիկ ձևով կատարվող ծախսերի և բանկային վճարային քարտերով շրջանառվող միջոցների չափաքանակների վերաբերյալ որոշման նախագծերը համապատասխան

մարմինները Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն են ներկայացնում մինչև 2026 թվականի փետրվարի 1-ը:

21. Սահմանել, որ Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի օգոստոսի 4-ի «Մարդու իրավունքների եվրոպական դատարանում Հայաստանի Հանրապետության ներկայացուցչի լիազորությունների իրականացման կարգը հաստատելու մասին» N 1289-Լ որոշման հավելվածի 4-րդ կետի 8-րդ ենթակետով նախատեսված հատկացումները ֆինանսավորվում են Հայաստանի Հանրապետության 2026 թվականի պետական բյուջեի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2026 թվականի պահուստային ֆոնդից, Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմի կողմից Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությանը հասցեագրված գրության հիման վրա՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանում Հայաստանի Հանրապետության ներկայացուցչի կողմից Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմին ներկայացված վերոհիշյալ որոշման հավելվածի 4-րդ կետի 8-րդ ենթակետով նախատեսված փաստաթղթերի և հիմնավորումների համաձայն: Նշված պարտավորություններով կատարված գործառնությունները հաշվառվում են Հայաստանի Հանրապետության 2026 թվականի պետական բյուջեի բյուջետային ծախսերի ծրագրային դասակարգման «1223 «Միջազգային դատարաններում, միջազգային արբիտրաժներում և այլ միջազգային ատյաններում Հայաստանի Հանրապետության շահերի ներկայացում և պաշտպանություն, դրանց կողմից ընդունված վճիռների և որոշումների կատարման ապահովում» բյուջետային ծրագրի «12001 «Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռների և որոշումների հիման վրա արդարացի ֆինանսական հատուցումների տրամադրում» միջոցառմամբ:

22. Սահմանել, որ Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի օգոստոսի 9-ի N 916-Ն որոշման պահանջներից բխող հատկացումները ֆինանսավորվում են Հայաստանի Հանրապետության 2026 թվականի պետական բյուջեի Հայաստանի Հանրապետության կառավարության 2026 թվականի պահուստային ֆոնդից, այդ հատկացումների գլխավոր կարգադրիչ հանդիսացող Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությանը հասցեագրված գրության հիման վրա: Սույն կետում նշված միջոցառումների կատարող պետական մարմին է համարվում Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության միասնական սոցիալական ծառայությունը: Կատարված գործառնությունները հաշվառվում են Հայաստանի Հանրապետության 2026 թվականի պետական բյուջեով «1205. Սոցիալական ապահովություն» ծրագրով նախատեսված «12004. Աջակցություն հաշմանդամ դարձած զինծառայողներին և զոհվածների ընտանիքներին» և «12005. Աջակցություն զոհվածների ընտանիքներին» միջոցառումներով:

23. «Հայաստանի Հանրապետության 2026 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում կատարել փոփոխություններ և վերաբաշխումներ՝ համաձայն N 13 հավելվածի:

24. Հանձնարարել՝

1) Հանրապետության պետական կառավարման և տարածքային կառավարման մարմինների ղեկավարներին՝ սույն որոշման N 12 հավելվածում նշված ծրագրերի միջոցառումների իրականացման ընթացքում համագործակցել Միավորված ազգերի կազմակերպության զարգացման ծրագրի «Շենքերի էներգաարդյունավետ արդիականացմանն ուղղված ներդրումների ռիսկերի նվազեցում» ծրագրի հետ՝ համաձայնեցնելով կապալառուների հետ կնքվող պայմանագրերի աշխատանքների ծավալաթերթերի մեջ ներառված էներգաարդյունավետ բաղադրիչների ծավալներն ու ծախսերը, համաձայնեցումից հետո ծավալների և գումարների վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացնել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն.

2) Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարին՝ N 12 հավելվածում նշված ծրագրերի միջոցառումների գծով Միավորված ազգերի կազմակերպության զարգացման ծրագրի սույն կետի 1-ին ենթակետում նշված ծրագրի ներքո համաձայնեցված ծախսերի գումարի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության պետական կառավարման և տարածքային կառավարման մարմիններից ստացված տեղեկատվության հիման վրա Միավորված ազգերի կազմակերպության զարգացման

ծրագրի հետ համաձայնեցված համաֆինանսավորման չափով վճարումներն իրականացնել համապատասխան կատարողականները Միավորված ազգերի կազմակերպության զարգացման ծրագրի կողմից ընդունելի համարելու գրության հիման վրա.

3) Հայաստանի Հանրապետության պետական կառավարման և տարածքային կառավարման մարմինների ղեկավարներին՝ տնտեսագիտական դասակարգման «Շենքերի և շինությունների հիմնանորոգում» հոդվածով բյուջետային տարվա ընթացքում Հայաստանի Հանրապետության կառավարության պահուստային ֆոնդից կամ այլ աղբյուրներից ֆինանսավորմամբ միջոցառումները ևս իրականացնել սույն կետի 1-ին ենթակետի համաձայն.

4) Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությանը եռամսյակային աճողական հաշվետվություն ներկայացնել Միավորված ազգերի կազմակերպության զարգացման ծրագրի սույն կետի 1-ին ենթակետում նշված ծրագրի համար Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի նոյեմբերի 17-ի N 1751-Ա որոշմամբ բացված ավանդային հաշիվների մուտքերի և կնքված պայմանագրերի ներքո էներգաարդյունավետ ծախսերի գծով իրականացված փաստացի վճարումների վերաբերյալ.

5) Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարին՝ Ասիական զարգացման բանկի հետ «Առողջապահության որակի բարելավման ծրագիր» և Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի հետ «Համընդհանուր առողջապահական ծածկույթի ծրագրի իրականացում» վարկային համաձայնագրերի շրջանակում ապահովել վարկային համաձայնագրերով սահմանված արդյունքահեն ցուցանիշների (ՄԿՑ/DLI) փաստացի իրականացումը սույն որոշման N 5 հավելվածով «ՀՀ առողջապահության նախարարություն» բաժնում նշված ծրագրերի միջոցառումների գծով նախատեսված հատկացումների հաշվին, ինչպես նաև դրանց վերաբերյալ ամբողջական և հավաստի հաշվետվությունների կազմումը և սահմանված կարգով անկախ վերիֆիկացման կազմակերպումը.

6) Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարին՝ վարկային համաձայնագրերով նախատեսված արդյունքահեն ցուցանիշների (ՄԿՑ/DLI) ապահովման վերաբերյալ նախարարության համապատասխան ստորաբաժանումներից

ստացված տեղեկատվության հիման վրա ամփոփ հաշվետվությունները ներկայացնել վերիֆիկացման անկախ գործակալներին, իսկ վերիֆիկացման արդյունքներով կազմված փաստաթղթերը՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն.

7) Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարին՝ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարությունից ստացված և վերիֆիկացման անկախ գործակալների կողմից հաստատված փաստաթղթերի հիման վրա, ինչպես նաև Ասիական զարգացման բանկի և Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի կողմից ընդունելի համարված արդյունքահեն ցուցանիշների (ՄԿՑ/DLI) մասով ներկայացնել համապատասխան վարկային միջոցների մասհանման հայտերը և իրականացնել բյուջեի կատարման համամասնությունների հաշվարկը:

25. Առաջարկել՝

1) Հայաստանի Հանրապետության նախագահի աշխատակազմի ղեկավարին, Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի աշխատակազմի ղեկավարգլխավոր քարտուղարին, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի նախագահին, Հայաստանի Հանրապետության բարձրագույն դատական խորհրդի նախագահին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազին, Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի նախագահին, Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն կոմիտեի նախագահին, Հայաստանի Հանրապետության հաշվեքննիչ պալատի նախագահին, Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանին, Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի նախագահին, Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահին, Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի նախագահին, Մրցակցության և սպառողների շահերի պաշտպանության հանձնաժողովի նախագահին, Հանրային հեռարձակողի խորհրդի նախագահին և Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի նախագահին Հայաստանի Հանրապետության 2026 թվականի պետական բյուջեի

կատարմանն աջակցելու նպատակով առաջնորդվել սույն որոշման 1-4-րդ, 15-րդ և 24-րդ կետերով.

2) Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի նախագահին Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությանը տրամադրել սույն որոշման N 6 հավելվածով սահմանված՝ Հայաստանի Հանրապետության 2026 թվականի պետական բյուջեի՝ եռամյակային կտրվածքով ծրագրավորված մուտքերի հավաքագրման արդյունքների և դրանց ծրագրային ցուցանիշներից շեղումների պատճառների մասին հաշվետվություն՝ մինչև տվյալ եռամյակի վերջին ամսվան հաջորդող երկրորդ ամսվա 5-ը.

3) Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի աշխատակազմի ղեկավար-գլխավոր քարտուղարին սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո մեկամսյա ժամկետում ներկայացնել «Կուսակցությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան նյութական աջակցության համար օրենքի N 1 հավելվածի N 2 աղյուսակի «1024 ՀՀ Ազգային ժողովի լիազորությունների իրականացման ապահովում» ծրագրի «12002 Աջակցություն կուսակցություններին և կուսակցությունների դաշինքներին» միջոցառմամբ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի աշխատակազմի համար նախատեսված հատկացումների բաշխումը, ըստ առանձին կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների), սահմանող Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծ:

26. Օրենքի 9-րդ հոդվածի 22-րդ մասով նախատեսված Հայաստանի Հանրապետության 2026 թվականի պետական բյուջեի փաստացի ձևավորված տարեսկզբի ազատ մնացորդի հաշվին ֆինանսավորման ենթակա՝ կապիտալ ծախսերի գծով 2025 թվականին ստանձնված, սակայն 2025 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ փաստացի չիրականացված պայմանագրային պարտավորությունների ընտրության և ֆինանսավորման նպատակով հանձնարարել՝

1) Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարին՝ մինչև 2026 թվականի հունվարի 20-ը ճշգրտել Հայաստանի Հանրապետության 2026 թվականի պետական բյուջեի տարեսկզբի ազատ մնացորդի փաստացի չափը և մինչև 2026 թվականի հունվարի 26-ը գնահատել փաստացի ձևավորված ազատ մնացորդի

հաշվին հնարավոր ֆիսկալ ռիսկերի հակազդման կարողությունը և ազատ մնացորդի օգտագործման հնարավորությունը.

2) Բյուջետային հատկացումների գլխավոր կարգադրիչների՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից տրամադրված ձևաչափի համաձայն մինչև 2026 թվականի հունվարի 31-ը Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն ներկայացնել 2025 թվականին ստանձնված, սակայն 2025 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ փաստացի չիրականացված պայմանագրային պարտավորությունների կատարման վերաբերյալ տեղեկատվությունը.

3) Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարին՝ սույն մասի 2-րդ կետի համաձայն ստացված տեղեկատվության հիման վրա մինչև 2026 թվականի փետրվարի 9-ը Հայաստանի Հանրապետության վարչապետի մոտ քննարկման ներկայացնել առաջարկությունների փաթեթ.

4) Բյուջետային հատկացումների գլխավոր կարգադրիչների՝ Հայաստանի Հանրապետության վարչապետի մոտ քննարկման արդյունքով դրական դիրքորոշում ստացած առաջարկությունների գծով մինչև 2026 թվականի փետրվարի 14-ը Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն ներկայացնել բյուջետային հայտեր.

5) Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարին՝ մինչև 2026 թվականի փետրվարի 20-ը Հայաստանի Հանրապետության կառավարության քննարկմանը ներկայացնել Հայաստանի Հանրապետության 2026 թվականի պետական բյուջեի՝ փաստացի ձևավորված տարեսկզբի ազատ մնացորդի հաշվին ֆինանսավորման ենթակա կապիտալ ծախսերի գծով 2025 թվականին ստանձնված, սակայն 2025 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ փաստացի չիրականացված պայմանագրային պարտավորությունների վերաբերյալ որոշման նախագիծ:

27. Սահմանել, որ նախորդ տարի փաստացի չիրականացված պայմանագրային պարտավորությունների գծով 2026 թվականի տարեսկզբի ազատ մնացորդի հաշվին ֆինանսավորման ենթակա կապիտալ ծախսերի գումարները չեն կարող վերաբաշխվել այլ նպատակների համար:

28. Սահմանել, որ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի տարեսկզբի ազատ մնացորդի հաշվին նախորդ տարի ստանձնված, սակայն փաստացի չիրականացված պայմանագրային պարտավորություններից ֆինանսավորման ենթակա կապիտալ ծախսերի ընտրության և ֆինանսավորման վերաբերյալ դրույթները չեն

տարածվում վարկային, դրամաշնորհային միջոցների պետության պաշտպանության ոլորտի կապիտալ ծախսերի նկատմամբ, որոնք սահմանվում են Հայաստանի Հանրապետության կառավարության առանձին որոշմամբ և ֆինանսավորվում բացառապես տվյալ տարվա պետական բյուջեով նախատեսված ընդհանուր հատկացումների շրջանակներում՝ վերաբաշխումների միջոցով:

29. Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի հունիսի 15-ի «Բյուջեների կատարման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» N 706-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 60-րդ կետում «մեկ տասներորդի» բառերը փոխարինել «քսան տոկոսի» բառերով:

30. Հույժ գաղտնի:

31. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

29.12.2025
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ